ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք.1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 93
28 ապրիլի 2015թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ.Գուլոյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 27-ին կայացած թիվ 5 արտահերթ նիստի որոշումները թղթային և էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 22 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» ապրիլի 2015 թվականի N 15

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը.

1. Մրգաշեն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 8-ի թիվ 10 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին
3. Մրգաշեն համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան
/ / Լ.Գրիգորյան
/ / Մ.Խաչատրյան
/ / Լ. Մարտիրոսյան
/ / Գ.Մուրադյան
/ / Դ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» ապրիլի 2015 թվականի N 16

ՄՐԳԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշեն համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 8-ի «Մրգաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը 2015թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին» թիվ 3 նիստի թիվ 10 որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն հավելված 1 և հավելված 2

Կողմ (7) Դեմ (0) Չեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան

/ / Լ.Գրիգորյան

/ / Մ.Խաչատրյան

/ / Լ. Մարտիրոսյան

/ / Գ.Մուրադյան

/ / Պ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված 1

Մրգաշեն համայնքի ավագանու 2015թ
ապրիլի 27-ի թիվ 5 նիստի թիվ 16 որոշում

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

01.01.2015թ-01.04.2015թ ժամանակահատվածի համար

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Տարեսկզբի հաստատված պլան			Փաստացի		
			Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝ (տող 1100 + տող 1200+տող		48305,2	48305,2	0,0	10781,6	10781,6	0,0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող	7100	7680,0	7680,0	X	880,8	880,8	X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝	7131	5820,0	5820,0	X	314,4	314,4	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		120,0	120,0	X	25,8	25,8	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		5700,0	5700,0	X	288,6	288,6	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	1520,0	1520,0	X	471,4	471,4	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		1520,0	1520,0	X	471,4	471,4	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	340,0	340,0	X	95,0	95,0	X
1131	Տեղական տուրքեր, այդ թվում՝	71452	340,0	340,0	X	95,0	95,0	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար, որից՝		30,0	30,0	X	25,0	25,0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		30,0	30,0	X	25,0	25,0	X
1137	ռ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		160,0	160,0	X	30,0	30,0	X

Բյուջե 2015

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Տարեսկզբի հաստատված պլան			Փաստացի		
			Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	4	5	6
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի		150,0	150,0	X	40,0	40,0	X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ	7300	35511,2	35511,2	0,0	8877,2	8877,2	0,0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, որից՝ (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258)	7331	35511,2	35511,2	X	8877,2	8877,2	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման մեխանիզմով տրամադրվող		35511,2	35511,2	X	8877,2	8877,2	X
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ	7400	5114,0	5114,0	0,0	1023,6	1023,6	0,0
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝	7415	94,0	94,0	X	23,6	23,6	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		94,0	94,0	X	23,6	23,6	X
1350	3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝ (տող 1351 + տող 1352)	7422	5205,9	5020,0	185,9	1000,0	1000,0	0,0
1351	Տարեսկզբի ազատ մնացորդ		185,9		185,9	0,0		0
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		1000,0	1000,0	X	0,0	0,0	X
1390	3.9 Այլ եկամուտներ, այդ թվում՝	7451	4020,0	4020,0	0,0	1000,0	1000,0	0,0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		4020,0	4020,0		1000,0	1000,0	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

Հավելված 2
Մրցաշրջան համայնքի ավագանու 2015թ
ապրիլի 27-ի թիվ 5 նիստի թիվ 16
որոշում

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

01.01.2015թ-01.04.2015թ ժամանակահատվածի համար

(հազար դրամով)

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հաստատված գումար: Ընդամենը (ս.7 +ս.8)	Հաստատված գումար: այդ թվում՝ վարչական բյուջե	Հաստատված գումար: այդ թվում՝ ֆոնդային բյուջե	Փաստացի: Ընդամենը (ս.7 +ս.8)	Փաստացի: այդ թվում՝ վարչական բյուջե	Փաստացի: այդ թվում՝ ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	50305,2	48305,2	2000,0	8817,6	8817,6	0,0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ այդ թվում՝ (տող2110+տող2120+տող2130+տող2140)	31667,4	27667,4	4000,0	5767,6	5767,6	0,0
2110	01	1	0	*Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝*	28963,4	26963,4	2000,0	5608,6	5608,6	0,0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	28963,4	26963,4	2000,0	5608,6	5608,6	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	20500,0	20500,0		4772,5	4772,5	
			4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1522,2	1522,2		0,0	0,0	
			4211	-Գործուղման և բանկային ծառայությունների ծախսեր	50,0	50,0	X	50,0	50,0	X
			4212	-Էներգետիկ ծառայություններ	450,0	450,0		95,0	95,0	
			4214	-Ջրի ծառայություններ	444,0	444,0		106,0	106,0	
			4215	-Աշխատակազմական ծախսեր	45,0	45,0	X	0,0	0,0	X
			4216	-Գույքի և սարքավորումների [illegible]	360,0	360,0	X	90,0	90,0	X
			4221	-Սերտին զորամասեր	150,0	150,0		26,4	26,4	
			4232	-Համակարգչային ծառայություններ	120,0	120,0		43,2	43,2	
			4234	-Տեղափոխվող ծառայություններ	200,0	200,0		12,0	12,0	
			4235	-Կատակարգական ծառայություններ	250,0	250,0		0,0	0,0	
			4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	200,0	200,0		0,0	0,0	
			4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	450,0	450,0		113,5	113,5	
			4264	-Տրանսպորտային նյութեր	700,0	700,0		300,0	300,0	
			4729	-Այլ նպաստներ բյուջեից	1522,2	1522,2		0,0	0,0	
			5113	- Մեքենաների և շինությունների կապիտալ վերանորոգում	1000,0		1000,0	0,0		0,0
			5122	- Վարչական սարքավորումներ	1000,0		1000,0	0,0		0,0
2160	01	6	0	*Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չդասակարգված), որից՝*	2704,0	704,0	2000,0	159,0	159,0	0,0
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չդասակարգված)	2704,0	704,0	2000,0	159,0	159,0	0,0

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝		Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	6	7	8
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4237	-Սեղմակալման ծախսեր	200,0	200,0		0,0	0,0	
			4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	200,0	200,0		40,0	40,0	
			4241	-Մասնագիտական ծառայություններ	250,0	250,0		117,0	117,0	
			4823	-Պարտադիր վճարներ	10,0	10,0		2,0	2,0	
			4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	44,0	44,0		0,0	0,0	
			5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2000,0		2000,0	0,0		0,0
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	200,0	200,0	0,0	0,0	0,0	0,0
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100,0	100,0		0,0	0,0	
					0,0			0,0		
2250	02	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100,0	100,0		0,0	0,0	
					0,0			0,0		
2300	03	0	0	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՍԿԱՆ	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
2320	03	1	1	Փրկարար ծառայություն, որից՝	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
2321	03	1	1	Փրկարար ծառայություն	100,0	100,0	0,0	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100,0	100,0		0,0	0,0	
					0,0			0,0		
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝	-6000,0	0,0	-6000,0	0,0	0,0	0,0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-6000,0	0,0	-6000,0	0,0	0,0	0,0
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-6000,0	0,0	-6000,0	0,0	0,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			8411	Հողի հիպոթեկից մուտքեր	-6000,0		-6000,0	0,0		0,0
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	2140,0	2140,0	0,0	388,0	388,0	0,0
2510	05	1	0	Սանիտարիա, որից՝	2140,0	2140,0	0,0	388,0	388,0	0,0
2511	05	1	1	Սանիտարիա	2140,0	2140,0	0,0	388,0	388,0	0,0
			4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1248,0	1248,0		288,0	288,0	

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում		Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
			4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	96,0	96,0		0,0	0,0	
"			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	400,0	400,0		0,0	0,0	
			4264	-Տրանսպորտային նյութեր	300,0	300,0		100,0	100,0	
			4729	-Այլ նպաստներ բյուջեից	96,0	96,0		0,0	0,0	
2840	06	4	0	*Փոխադրումների յուսապահովում, որից՝*	5900,0	3900,0	2000,0	1350,0	1350,0	0,0
2841	06	4	1	Փոխադրումների յուսապահովում	5900,0	3900,0	2000,0	1350,0	1350,0	0,0
			4212	-Էներգետիկ ծառայություններ	3500,0	3500,0		1350,0	1350,0	
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	200,0	200,0		0,0	0,0	
			4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	200,0	200,0		0,0	0,0	
			5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2000,0		2000,0	0,0		0,0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՈՐՈՆ, այդ	1300,0	1300,0	0,0	252,0	252,0	0,0
2820	08	2	0	*Մշակութային ծառայություններ, որից՝*	1300,0	1300,0	0,0	252,0	252,0	0,0
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	1300,0	1300,0	0,0	252,0	252,0	0,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0,0			0,0		
			4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	400,0	400,0		252,0	252,0	
			4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	900,0	900,0		0,0	0,0	
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	8277,8	8277,8	0,0	810,0	810,0	0,0
2910	09	1	0	*Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝*	8277,8	8277,8	0,0	810,0	810,0	0,0
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	8277,8	8277,8	0,0	810,0	810,0	0,0
			4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	8277,8	8277,8		810,0	810,0	
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	2000,0	2000,0	0,0	250,0	250,0	0,0
3070	10	7	0	*Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝*	2000,0	2000,0	0,0	250,0	250,0	0,0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	2000,0	2000,0	0,0	250,0	250,0	0,0
			4729	Այլ նպաստներ բյուջեից	2000,0	2000,0		250,0	250,0	
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԻՍԱԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, այդ թվում՝	2720,0	2720,0	0,0	0,0	0,0	0,0
3110	11	1	0	*<< կատարողական և հաշվարկների պահուստային ֆոնդ, որից՝*	2720,0	2720,0	0,0	0,0	0,0	0,0
3112	11	1	2	<< հաշվարկների պահուստային ֆոնդ	2720,0	2720,0	0,0	0,0	0,0	0,0
			4891	<< հաշվարկների պահուստային ֆոնդ	2720,0	2720,0		0,0	0,0	
					0,0			0,0		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» ապրիլի 2015 թվականի N 17

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքում աղբահանության իրականացման կարգը համաձայն հավելված 1
2. Հաստատել Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված 2

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան
/ / Լ.Գրիգորյան
/ / Մ.Խաչատրյան
/ / Լ. Մարտիրոսյան
/ / Գ.Մուրադյան
/ / Ղ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված1
ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն
համայնքի ավագանու 2015 թվականի
ապրիլի 27-ի թիվ 17 որոշման

ԿԱՐԳ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքում աղբահանության իրականացումը:

2. Աղբի հեռացումը Մրգաշեն համայնքի վարչական տարածքից իրականացվում է համայնքի տարածքում տեղադրված աղբամաններից, բնակելի տներից, հասարակական և արտադրական նշանակության կառույցներից՝ շաբաթական առնվազն երկու անգամ:

3. Անհատական բնակելի տներից աղբի հեռացումը իրականացվում է աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենայով /կցասայլով տրակտորի միջոցով/՝ փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի բարձման միջոցով:

4. Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պարտադիր հեռացվում է՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

5. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած աղբամաններում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողներին պատկանող համապատասխան տարածքներում:
Աղբահանությունը Մրգաշեն համայնքում կազմակերպել համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

հ/հ	Շաբաթվա օրերը	Փողոցների, տարածքների անվանումները
1	Հինգշաբթի Կիրակի	1-ին փողոց
		1-ին փողոց 14-րդ նրբանցք
		2-րդ փողոց
		3-րդ փողոց
		4-րդ փողոց
		4-րդ փողոց 1-ին նրբանցք
		5-րդ փողոց
		6-րդ փողոց
		7-րդ փողոց

6. Աղբի հեռացման ժամային գրաֆիկը ըստ փողոցների և տարածքների կազմվում է Մրգաշենի գյուղապետարանի կողմից և իրազեկվում է բնակչությանը:

7. Աղբի տեղափոխումը կատարվում է աղբաթափման համար սահմանված Եղվարդ համայնքի վարչական տարածքում գտնվող աղբավայր՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն
համայնքի ավագանու 2015 թվականի
ապրիլի 27-ի թիվ 17 որոշման

Ս Խ Ե Մ Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

1. Մրգաշեն համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հուշարձանների, հրապարակների, բակերի, մայթերի, կամուրջների, սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, փողոցների և մայթերի ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

2. Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն բնութագրվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

3. Ամառային մաքրումն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները:

4. Իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է՝ սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքները աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը, ասֆալտապատ և ոչ ասֆալտապատ փողոցներում ձեռքով մաքրման միջոցով մաքրվող տարածքներից աղբը հավաքելով կույտերի տեսքով՝ փողոցներում այդ նպատակի համար հատկացված տեղերում:

5. Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը և փոսերի մաքրումը, փողոցների երթևեկելի մասի լվացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

6. Ձմեռային մաքրումն իր մեջ ընդգրկում է փողոցների, մայթերի, հրապարակների մաքրումը ձյունից, պայքար փողոցների սառցակալման դեմ, սառցակույտերի մաքրումը և հեռացումը (ըստ անհրաժեշտության): Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովվում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

7. Համայնքում սանիտարական մաքրման աշխատանքների ժամանակացույցը ըստ փողոցների և տարածքների կազմվում է Մրգաշենի գյուղապետարանի կողմից և իրազեկվում է բնակչությանը:

Սանիտարական մաքրման ենթակա փողոցները, տարածքները, աշխատանքների ծավալները Մրգաշեն համայնքում հետևյալն են՝

8. Համայնքի մաքրվող տարածքը կազմում է 55000 քառ. մետր, որից ասֆալտապատ փողոցների, մայթերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 55000 քառ. մետր, իսկ ոչ ասֆալտապատ տարածքներից մաքրման տակ ընդգրկված է 0 քառ. մետր:

9. Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝

1) Ասֆալտապատ ծածկույթ ունեցող փողոցների, հրապարակների մեկ քառ. մետր մակերեսից տարեկան գոյանում է մոտ 20 կգ ավելվածք,

2) Ոչ ասֆալտապատ (գրունտային) տարածքների մեկ քառ. մետր մակերեսից գոյանում է մոտ 0 կգ:

10. Համայնքի մաքրվող տարածքից կգոյանա՝

1) 55000 X 0,015 = 825 : 12 = 68.8 տոննա աղբ,

11. Ընդամենը՝ 68.8 տոննա աղբ, շաբաթական աղբը կկազմի 68.8:4=17,2 տոննա Մրգաշեն համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը իրականացնել աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենայի միջոցով՝ բարձումն իրականացնելով ձեռքով:

12. Աղբի տեղափոխումը կատարվում է աղբաթափման համար սահմանված Եղվարդ համայնքի վարչական տարածքում գտնվող աղբավայր՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

13. Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները կատարել համապատասխան մասնագիտացված մեքենայի և էքսկավատորի միջոցով:

14. Մրգաշեն համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձաններն են՝

Զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար հուշարձանները՝ Մրգաշենի գյուղապետարանի վարչական շենքի հարևանությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» ապրիլի 2015 թվականի N 18-Ն

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջով համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Մրգաշեն համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի

Կողմ (7) Դեմ (0) Չեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան
/ / Լ.Գրիգորյան
/ / Մ.Խաչատրյան
/ / Լ. Մարտիրոսյան
/ / Գ.Մուրադյան
/ / Պ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

Հաստատված 22 Կոտայքի մարզի Մրգաշեն
համայնքի ավագանու 2015 թվականի
ապրիլի 27-ի թիվ 18-Ն որոշմամբ

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական, հողային օրենսդրության և այլ իրավական ակտերի համապատասխան սույն կանոնադրությունը սահմանում է քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացակարգերը Մրգաշեն համայնքում, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների (կառուցապատողներ, նախագծի մշակողներ և շինարարություն իրականացնողներ) իրավասությունները և պարտականությունները:

II. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2. Մրգաշեն համայնքի հողերի նպատակային և գործառական նշանակությունները սահմանվում են համայնքի գլխավոր հատակագծով:
3. Հողամասերի թույլատրված օգտագործումը սահմանվում է համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:
4. Հողամասերը տրամադրվում են նպատակային և գործառական նշանակության հաշվառմամբ, թույլատրված օգտագործման նշումով.
   1) առանց հրապարակային սակարկության,
   2) մրցույթով (աճուրդով):
5. Հողօգտագործողը պարտավոր է ապահովել հողամասի նկատմամբ իր իրավունքների պետական գրանցումը:

III. ՀՈՂՆ ԱՌԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն առանց մրցույթի (աճուրդի) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ նախատեսված դեպքերում:
7. Հողամասի տրամադրման հարցը քննարկվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ համայնքի ղեկավարին ուղղված դիմումի հիման վրա:
8. Դիմումին ընթացք է տրվում Մրգաշենի գյուղապետարանի գործավարության կարգի համաձայն:
9. Անհրաժեշտ փաստաթղթերը բացակայելու դեպքում դիմումները հոտրյա ժամկետում ետ են վերադարձվում՝ նշելով դիմումների վերադարձման պատճառները և հիմքերը:
10. Հողամասի տրամադրման մասին եզրակացությունը տրվում է գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի կողմից:
11. Հողամասի սահմանները որոշելուց, հողամասի հատակագիծը և նկարագրությունը կազմելուց հետո նշված փաստաթղթերի հիման վրա կազմվում է հողամասի տրամադրման գործ:
12. Հողամասի տրամադրման գործն ընդգրկում է՝
    1) դիմում,
    2) աշխատակազմի համապատասխան մասնագետի եզրակացությունը և զեկուցագիրը,
    3) հողամասի հատակագիծը,
    4) հողամասի նկարագրությունը,
    5) ֆիզիկական անձի անձնագրի պատճենը, իրավաբանական անձի (կազմակերպության) պետական գրանցման մասին վկայականի պատճենը,
    6) գործին առնչվող այլ փաստաթղթեր:

    Հողամասի տրամադրման գործը կազմվում է մեկ օրինակից:
13. Հողամասի տրամադրման գործի հիման վրա գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետը կազմում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծը:
14. Հողամասի տրամադրման մասին համայնքի ղեկավարի որոշման կայացումից հետո՝ որոշման նախագիծը՝ բոլոր անհրաժեշտ նշագրումներով, նախագծի հիմքերով, այդ թվում՝ հողամասի տրամադրման գործի հետ միասին պահվում են գյուղապետարանի աշխատակազմի արխիվում:
15. Հողամասի տրամադրման մասին որոշումը ստանալուց հետո՝ դիմողը կնքում է հողամասի վարձակալության (օտարման) պայմանագիր համայնքի ղեկավարի հետ:
16. Հողամասի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պարտավորությունը կրում է համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված հողօգտագործողը (ֆիզիկական կամ իրավաբանական անձը):

IV. ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ (ԱՃՈՒՐԴՈՎ) ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

17. Մրզաշեն համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցութային և օտարվում՝ աճուրդային կարգով Մրզաշեն համայնքի ղեկավարի՝ մրցույթ (աճուրդ) հայտարարելու մասին որոշման հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ, 61-րդ, 67-70-րդ, 77-80-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ և 43-59-րդ կետերով
18. Հողամասերը մրցույթով վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու և աճուրդային կարգով օտարելու կազմակերպական աշխատանքներն իրականացնում է Մրզաշեն համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված Մրզաշեն համայնքի վարչական տարածքներում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը

V. ՀՈՂՇԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

19. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հողհատկացման հիմքերի վերականգնման գործին ընթացք է տրվում շահագրգիռ իրավաբանական անձի Մրզաշեն համայնքի ղեկավարին ուղղված դիմումի հիման վրա
20. Հողհատկացման հիմքերի վերականգնման ընթացակարգով դիմողին տրամադրվում է օրենքի և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կառուցված շինություններով զբաղեցված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ այն հողամասը, որը (կամ նրա մի մասը) հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր տրամադրել հրապարակային սակարկությունների միջոցով
21. Դիմումի հիմնավորվածության մասին եզրակացություն է տալիս աշխատակազմի համապատասխան մասնագետը: Դիմումը հիմնավորված չլինելու դեպքում դիմողին տրվում է համապատասխան գրավոր պարզաբանում
22. Հիմք ընդունելով աշխատակազմի համապատասխան մասնագետի եզրակացությունը, դիմումի քննարկման հետագա ընթացքը կարգավորվում է սույն կանոնադրության «Հողն առանց հրապարակային սակարկության տրամադրելու կարգի» կանոններով

VI. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

23. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 22-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Մրզաշեն համայնքում ճարտարապետահատակագծային առաջադրանք տալիս է համայնքի ղեկավարը
24. Առաջադրանք ստանալու համար կառուցապատողը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտը՝ լրացված Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթի համապատասխան
25. Գույություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառույց կամ այլ բարելավում, վերակոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը
26. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ձևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եզրակացությունը
27. Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրում է կամ մերժում՝ կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները:
28. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և նորին հայտ ներկայացնել իրավասու մարմնին:

29. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջարկներ:
30. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

VII. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ

31. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերը Մրգաշեն համայնքում համաձայնեցվում են համայնքի ղեկավարի հետ:
32. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 711-Ն որոշմանը համապատասխան իրականացված փորձաքննության եզրակացությունը (բացառությամբ սահմանված դեպքերում և կարգով նախագծողի գրավոր երաշխավորագրով թողարկված նախագծերի):
33. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եզրակացություն շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:
34. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում ներառվում է շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը:
35. Նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են դրանք ներկայացնելու օրվանից՝
    1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում:
    2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:
36. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են, դրանք կրկին ներկայացվելու օրվանից՝
    1) սույն կարգի 36-րդ կետի 1-ին ենթակետում նշված օբյեկտների մասով՝ եռօրյա ժամկետում:
    2) սույն կարգի 36-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օբյեկտների մասով՝ 7-օրյա ժամկետում:

VIII. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ:

38. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթղթերը մշակվում են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվում են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ելնելով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկություններից:
39. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

IX. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

40. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդես է գալիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:

41. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Մրգաշեն համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

X. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոխնակելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող Կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքաշինական, հարկային իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթղթերով

43. Մրզաշեն համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սանիտարական պաշտպանության, կառուցապատվող հողերի պահպանության խնդիրներն ապահովելու նպատակով, կառուցապատողը պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.

1) շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր

2) փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիոտն շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկոցներով

3) կառուցապատողը պարտավոր է իրականացնել հողի բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշման համաձայն:

XI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

44. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

45. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Հարկային իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

XII. ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

46. Մրզաշեն համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» թիվ 660 որոշման համաձայն և սույն կարգով:

47. Մրզաշեն համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնությանն իրազեկում է Մրզաշեն համայնքի ղեկավարը:

48. Իրազեկումն իրականացվում է.
   1) զանգվածային լրատվության միջոցներով.
   2) համայնքային էլեկտրոնային կայք-էջում տեղադրմամբ.
   3) հասարակական քննարկումներով:

49. Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման ու ցուցադրման ժամկետը սահմանվում է 15 օր:

50. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում եռամսյակ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև հրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եզրակացությունները գրավոր ներկայացնում են Մրգաշենի գյուղապետարանի աշխատակազմին:

51. Համայնքի ղեկավարը հասարակայնության ներկայացուցիչների (դիտողությունների և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ դիտողությունների ու առաջարկությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին:

XIII. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

52. Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:
53. Քանդման թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է սեփականատիրոջ շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:
54. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիտուտներին:
55. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:
56. Շինարարության (քանդման) թույլտվությունը Մրգաշեն համայնքում տալիս է Մրգաշեն համայնքի ղեկավարը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշմամբ սահմանված կարգով:
57. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետով:
58. Շինարարության տնտեսությունը կարող է երկարաձգվել օրենքով սահմանված կարգով:
59. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:
60. Մրգաշեն համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե:

61. Թույլտվության տեսակներն են՝

   1) նոր կառուցվող օբյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը,
   2) գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կատարման թույլտվությունը,
   3)գոյություն ունեցող օբյեկտների քանդման թույլտվությունը:

62. Կառուցապատողը շինարարության թույլտվություն ստանալու համար գյուղապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև 1),

2) օբյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերը, որտեղ նշվում են շինարարության տևողության ժամկետը, իսկ փուլերով մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթղթերը։

63. Դիմումում նշվում են՝

1) օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) օրենքով սահմանված դեպքերում՝ օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակած և սահմանված կարգով փորձաքննություն անցկացրած տնտեսավարող սուբյեկտները՝ համապատասխան գործունեության իրականացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի երաշխավորագիրը։

64. Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդման աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբը համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր։

65. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան։

66. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար գյուղապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև N 2),

2) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը)։

67. Դիմումում նշվում են՝

1) քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) քանդման նպատակը,

3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները։

68. Թույլտվություն տվող իրավասու մարմինը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթղթերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմում տալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում։

69. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձևերի (ՁևN 3 և Ձև N 4 ձևեր)։

70. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակնքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը։

71. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացում հնարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը համապատասխան նշումով, հանձնաժողովում է նաև քանդման թույլտվություն։

72. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ։

73. Այն դեպքում, երբ տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը, քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո։

74. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն։

75. Համայնքի ղեկավարը տալիս է թույլտվություն կամ այն մերժում է (գրավոր իրազեկելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում։

76. Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում:

77. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման կամ վերջինիս մերժման մասին կառուցապատողը տեղեկացվում է դիմումում նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:

78. Թույլտվության ձեռքերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել թույլտվություն տվող իրավասու մարմին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ և սույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

79. Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Մրցաշենի գլուխպետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված N 5 ձևի, եթե թույլտվությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

80. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում՝ սույն կարգի 80-րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N 5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:

81. Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

XIV. ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

82. Մրգաշեն համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով, նույն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացումից հետո:

83. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

84. Դիմումին կցվում են՝

1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը.

2) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եզրակացությունները.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը.

4) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

85. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:

86. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն:

87. Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:

88. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 86-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 85-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

89. Իրավասու մարմնի առաջադրած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

90. Շահագործման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է գյուղապետարանում, մեկական օրինակ տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարության աղբնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարմնին:

XV. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

91. Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝

1) հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.
2) հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու նկատմամբ.
3) հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ.
4) հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
5) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:

92. Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

XVI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

93. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված հարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:

94. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1] հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտելու վերաբերյալ գործերը:

XVII. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

95. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը Մրգաշեն համայնքում կատարում է համայնքի ղեկավարը: